ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիա-
տի և Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիա-
տի հետ միասին, սահմանվում են թոշակային
կոպարների հետեւալ չափերը՝

ա. ԲԱԻՀ-ԵՐԻ յեզ ԲՏՈՒՆ-ԵՐԻ համար

I դասն. II դասն. III դասն. IV դասն.

Նորմալ հառաջա- դիմություն	75	90	105	150
Բարձր հառաջա- դիմություն	90	105	125	175

բ. Տեխնիկումների համար

I դասն. II դասն. III դասն. IV դասն.

Նորմալ հառաջա- դիմություն	45	50	55	65
Բարձր հառաջա- դիմություն	50	65	75	90

Շանօրուրյուն.—Ժողկոմատներին և
գերատեսչություններին թուլլ և տըր-
վում՝ նայած հատուկ պայմաններին,
վերև մատնանշված ամսական թողա-
կացին կոպարների չափը իջեցնել՝
ԲԱԻՀ-ԵՐԻ համար 10՝ ոռըլ, տեխնի-
կումների և բանֆակների համար 5
ոռըլով։

3. Ուսանողի հառաջադիմության աստիճանը
վորոշում և նըա համար թոշակի համապատա-
խան կարգը սահմանում ե ուսումնական հաս-

տատության դիրեկտորը՝ ըստ պրոֆեսորական-
դասատվական կազմի տվյալների՝ համաձայն
ԲՈՒՀ-երի, ԲՏԾՈՒՀ-երի, տեխնիկամների և բան-
ֆակների ուսանողության հառաջադիմությունը
հաշվառելու հատուկ հրահանգի, վորը հրատա-
րակում ե ԽՍՀՄ Կենտդործկոմին կից բարձրա-
գույն տեխնիկական դպրոցի կոմիտեն, իսկ կո-
միտեյին չենթարկվող ուսումնական հաստատու-
թյունների նկատմամբ—համաձայն դաշնակից
հանրապետությունների լուսավորության ժողկո-
մատների հրահանգների:

Հրահանգներում պետք ե նախատեսվեն թո-
շակի չափը վերանայելու ժամկետները՝ ըստ
առանձին կատեգորիաների:

4. Ուսումնական հաստատությունների դի-
րեկտորներին թույլ ե տրվում թոշակից զըկել
այն ուսանողներին, վորոնք չեն հառաջադիմում
առանց հարգելի պատճառների և թոշակ
չնշանակել այն հառաջադեմ ուսանողներին, վո-
րոնք նկութապես ապահովված են, վերջիննե-
րիս՝ ուսման բարձր ցուցանիշների համար պար-
զեատրելով հատուկ պարզեատրական ֆոնդից,
վոր կազմվում ե ընդհանուր թոշակալին ֆոնդի
մեջ:

5. ԲՈՒՀ-երի, ԲՏԾՈՒՀ-երի, տեխնիկամների
և բանֆակների ուսանողներին թոշակը արվում

և ամբողջ տարվա ընթացքում, անկախ ուսանողի անընդհատ արտադրական ուսման մեջ գտընվելու ժամանակից:

Ծանրութ.—ԲՈՒՀ-երի, ԲՑՈՒՀ-երի, տեխնիկումների և բանֆակների ուսանողները՝ անընդհատ արտադրական ուսման մեջ գտնվելու ժամանակ, ի հաշիվ ձեռնարկության ստանում են որպահիկ և ընակարանի վարձ՝ ԽՍՀՄ Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի կողմից հաստատված նորմաների սահմանում:

9. Ժողկոմատներն ու գերատեսչությունները իրենց ընդհանուր թոշակային ֆոնդերի սահմաններում վորոշում են լուրաքանչյուր ԲՈՒՀ-ի, ԲՑՈՒՀ-ի, տեխնիկումի և բանֆակի թոշակային ֆոնդի չափը, ըստ ուսումնական հաստատության մասնագիտության, ըստ ուսանողների սոցիալական կազմի, ըստ պատրաստվող կադրերի դեֆիցիտայնության և ըստ տվյալ ուսումնական հաստատությունների կոմպլեկտավորման պայմանների:

7. Ուսումնական հաստատության դիրեկտորները թոշակային ֆոնդը ծախսելու վերաբերյալ հաշիվ են տալիս ժողկոմատներին, իսկ ժողկոմատները ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների ֆինանսական ժողովը դաշտական կոմիսարիատներին՝ այն ժամանա-

կամիջոցներին ու այն ձևով, վոր սահմանում ե
ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիտարիա-
տը և համաձայնեցնում ժողովրդա-տնտեսական
հաշվառման կենտրոնական վարչության հետ:

8. Գերատեսչությունները պահում են թո-
շակային ֆոնդի հատուկ հաշվառումը, ապահովե-
լով վոր տեղերում սխատեմատիկորեն ստուգվի
այդ ֆոնդի ծախսումը անմիջական նպատակի
համար:

Թոշակային ֆոնդը վոչ անմիջական նպա-
տակի համար ծախսելու մեջ հանցավորները
պետք ե կանչվեն քրեյական պատասխանառվու-
թյան:

9. Այս վորոշումը կիրառվում է 1933 թ.
հունվարի 1-ից:

10. Հանձնարարել դաշնակից հանրապետու-
թյուններին՝ կառավարություններին՝ դաշնակից
հանրապետությունների գործող որենսդրության
մեջ մտցնել այս վորոշումից բղիսող փոփոխու-
թյունները:

ԽՍՀՄ Ժողկոմիսորնի նախագահ՝

Վ. ՄՈԼՈՏՈՎ (Սկրյարին)

ԽՍՀՄ Ժողկոմիսորնի գործերի կառավարչի
տեղակալ՝ Ի. ՄԻՔԱՆԻԿՈՎ

Մոսկվա—Կրեմլ.

1932 թ. մետրվարի 10.

№ 181

Քաղվածք ԽՍՀՄ Ժողկոմիստրի 1933 թ. մայիսի 3-ի
նիսի № 9 արձանագրությունից

ԲՌԻՀ-ԵՐԻ, ԲՏՌԻՀ-ԵՐԻ և տեխնիկումների ռւսանողների
արտադրական պրակտիկայի մասին

ա) Սահմանել՝

1. ԲՌԻՀ-ԵՐԻ և ԲՏՌԻՀ-ԵՐԻ 3-րդ կուրսի ռւսանողների և տեխնիկումների 3-րդ և 4-րդ կուրսի ռւսանողների համար, վորոնք գործուղվում են արտադրական պրակտիկայի, որպատճիկ՝ — 2 ռ. չափ և բնակարանային վարձ՝ (յեթե բնակարան չի արածադրվում) — 1 ռ. չափ։

2. ԲՌԻՀ-ԵՐԻ և ԲՏՌԻՀ-ԵՐԻ 4-րդ և 5-րդ կուրսի ռւսանողների համար՝ գործուղման (որպատճիկ) — 3 ռ. չափ և բնակարանային վարձ՝ 1 ռ. չափ։

բ) Սահմանել, վոր որպատճիկը և բնակարանային վարձը ռւսանողներին պետք է վճարվի համապատասխան ձեռնարկության ընդհանուր աշխատավարձի ֆոնդից։

ԽՍՀՄ Ժողվրդական Կոմիտարենտի Խորհ.
նախագահ՝ ՄՈԼՈՏՈՎ (Սկրյաբին)

ԽՍՀՄ Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի բարձրագույն դպրոցների և տեխնիկումների ուսանողների թոշակների, նրանց արտադրական պրակտիկայի ժամանակ աշխատանքի պայմանների մասին և ուսումնավարտելուց հետո նրանց աշխատանքի տեղափորելու կարգի մասին

1930 թ. հոկտեմբերի 4-ին

III. ԲՈՒՀ-ԵՐԸ ՅԵՎ ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐՆ ԱՎԱՐՏԱԾ
ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ
ՏԵՂԱՎՈՐԵԼԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԹՆՈՆՆԵՐ

27. Այս հրահանգով մշտական աշխատանքի տեղափորելու կարգը տարածվում և ԲՈՒՀ-երի և տեխնիկումների բոլոր ճյուղերը և մասնագիտությունները ավարտած (նույն թվում և եկստերնատի կարգով), տնտեսական մարմիններին և ժողկոմատներին ամրացված յերիտասարդ մասնագետների վրա:

Միութենական հանրապետությունների լուսաժողկոմատների տրամադրության տակ մնացած՝ ԲՈՒՀ-երն ու տեխնիկումներն ավարտած մասնագետներն աշխատանքի յեն տեղափորվում Միութենական Աշխատադիմատների, շահագրգռա-

ված պերատեսչությունների և արհեստակցական կազմակերպությունների համաձայնութեամբ սահմանված կարգով: Այդ կարգը սահմանելիս մասնագետները պիտի ապահովված լինեն նույն իրավունքներով, վորով ողտվում են ամրացված, թՌԻՀ-երի ու տեխնիկումներն ավարտած մասնագետները (փոխհատուցում տեղափոխության կապակցությամբ, աշխատանքի պայմաններ և այլն):

28. Աշխատանքի յեն տեղավորվում թե թոշակառուները և թե վոչ թոշակառուները:

29. Մինչև ուսում ավարտելն իսկական գինվորական ծառայությունն չանցած մասնագետների նկատմամբ կիրառվում են հետեյալ կանոնները.

ա) Այդ մասնագետներն աշխատանքի տեղավորվում են ընդհանուր հիմունքներով.

բ) Ցեթե հետագայում՝ զինակոչի ժամանակ (վորը կատարվում ե ըստ նրա աշխատավայրի) մասնագետը անընդհատ (ժամկետավին) ծառայության կնշանակվի ԲԳԿ Բանակի շարքերում կամ կնշանակվի ռազմա-աբտագրական ծառայություն տանելու համար, այդ դեպքում նա արձակվում և աշխատանքից գորակոչիների համար սահմանված ընդհանուր կանոններով:

գ) ԲԳԸ Բանակի շարքերում անընդհատ

ծառայությունը կամ ռազմա-արտադրական ծառալությունը վերջացնելուց հետո մասնագետը պարտավոր ե վերադառնալու նախկին աշխատանքին: Այն դեպքում՝ յերբ անհնարին ենթան նախկին աշխատանքում ոգտագործել, համապատասխան տնտեսական միավորումի կամ ժողկումատի հաշվ: բաշխիչ բաժինն ուղարկում ե նրան ըստ մասնագիտության այլ աշխատանքից Յեթե տվյալ տնտեսական մարմնում կամ ժողկումատում ըստ նրա մասնագիտության աշխատանք չլինի, այդ դեպքում հաշվ: բաշխիչ բաժինը մասնագետին դնում է ըստ սղատկանելույն ԽՍՀՄ կամ Միութենական Հանրապետության Աշխատղկումատների տրամադրության տակ:

Դ) ԲԳԿ Բանակի շարքերում անընդհատ ծառալության ժամանակը մասնագետի յերեք տարվա ծառայության ստաժի մեջ չի հաշվվում (31, 32 և 53 հոդվածներ), իսկ ռազմա-արտադրական ծառայության ժամանակը մասնագետի յերեք տարվա (յեռամյա) ծառայության մեջ ե հաշվվում:

Ե) Վերեւում մատնանշված կարգը կիրառվում է մասնագետների նկատմամբ այն դեպքում, յերբ նրանք ԲՈՒՀ-երում չեն անցել արտաքանակային բարձր վարժության: ԲՈՒՀ-երում արտաքանակային բարձր վարժություն անցած

ժասնագետներն՝ ուսումն ավարտելուց հետո
ուղարկվում են աշխատանքի, հետագայում ա-
ռանց ԲԳԿ Բանակի շարքերում անընդհատ ծառ-
ուայտթյան կանչվելու. շահագրդոված ժողով-
մատները կտրող են միջնորդություն հարոցի Զինծովային Փողկոմատի տուած, վոր այդ կար-
գը տարածվի և մյուս ԲՈՒՀ-երի վրա, վորտեղ
արտարանակային բարձր վարժություն չի անց-
կացված, կամ ամբողջ ԲՈՒՀ-ի նկատմամբ և
կամ նրա տուանձին ընդունելությունների վրա:
Զինծովային Փողկոմատն այդ հարցերը լուծում
և համաձայնեցնելով ԽՍՀՄ Աշխատողկոմատի և
շահագրդոված ժողկոմատների հետ:

30. Այս հրահանդի կարդով առաջարկվող աշ-
խատանքից վոչ հարդելի պատճառներով հրա-
ժարվող կամ խուսափող մասնագետը պատա-
խանատվության և կանչվում սահմանված կար-
գով:

Աշխատանքից հրաժարվողների շարքին են
պատկանում մասնավորապես և այն մասնագետ-
ները, վորոնք թեև չեն հրաժարվել տվյալ տրն-
տեսական մարմնում կամ Փողկոմատում աշխա-
տելուց, բայց հրաժարվել են ընակավայրից
դուրս գտնվող ձեռնարկության մեջ կամ հիմ-
նարկում աշխատելուց, ուր նրանք դործուղված
են յեղել:

31. Ուսումն ավարտելու որից մինչև յերեք
տարին լրանալը, վորեե պատճառով աշխատան-
քից արձակված մասնագետը պարտավոր եներ-
կայանալու համապատասխան տնտեսական մար-
մնի կամ ժողկոմատի բաշխիչ մարմնին՝ նոր
աշխատանք ստանալու համար:

32. Ուսումն ավարտելուց հետո Յ տարվա
ընթացքում արգելվում ե մասնագետին աշխա-
տանքի ընդունել առանց ուսհիմնարկի կողմից
(վորտեղ ավարտել ե ուսումը) տված զործուղ-
ման թերթի (պուտյովկայի):

2. Ուսհիմնարկներն ավարտողների
մասին տեղեկություններ և ձեռնար-
կություններին ու հիմնարկներին
անհրաժեշտ մասնագետների պահանջ
(հայտ) ներկայացնելը

33. Ուսհիմնարկներն ամեն տարի նոյեմբերի
15-ին և մայիսի 15-ին ներկայացնում են տըն-
տեսական միավորման կամ ժողկոմատների հաշվ-
բաշխիչ մարմիններին, վորոնց անմիջական ի-
րավասության տակ են գտնվում, տեղեկու-
թյուններ՝ մոտակա, այսինքն հունվարի 1-ի և
հունիսի 1-ի, կամ հուլիսի 1-ի և հունվարի 1-ի
միջև յեղած ժամանակամիջոցում, ուսհիմնարկ-
ներն ավարտող անձանց մասին: Տեղեկություն-

Ներում նշվում ե ավարտողների թիվը, նրանց
մասնագիտությունը և ավարտման ժամկետը:
Տեղեկություններում պիտի առանձնացված լի-
նեն (համապատասխան բաժանումներով ձեռ-
նարկությունների և հիմնարկների վրա) այն
անձինք, վորոնք ուսման ժամանակ ամրացված
են յեղել վորոշ ձեռնարկությունների կամ հիմ-
նարկների վրա (այս կազմի անձանց շարքին
են պատկանում այն անձինք, վորոնք ամրաց-
ված են կոնտրակտացիայի պայմանագրերով
կամ այն պայմանագրերով, վորոնք կնքված են
շահագրգուված ձեռնարկությունների և հիմնարկ-
ների ու տնտեսական միավորման կամ ժողկո-
մատների միջև):

Տնտեսական միավորումների հաշվ. բաշխիչ
բաժինները իրենց վրա ամրացված ուսհիմ-
նարկների վերաբերյալ ստացված տեղեկու-
թյունները խմբավորում և ամեն տարի դեկտեմ-
բերի 1-ին և հունիսի 1-ին ներկայացնում են
ԽՍՀՄ և Միութենական հանրապետությունների
համապատասխան ժողկոմատների հաշվ. բաշխիչ
բաժիններին: (ԽՍՀՄ Աշխարհականի 1930 թ.
հոկտեմբերի 13-ի № 320 վորոշմամբ ընդուն-
ված խմբագրությամբ):

34. Բոլոր ձեռնարկություններն ու հիմ-
նարկները ամեն տարի նոյեմբերի 15-ին և մա-

յիսի 15-ին ներկայացնում են փրենց համար անհրաժեշտ լերիտասարդ մասնագետների հայտը Հալտերում նշվում են անհրաժեշտ մասնագետների թիվը, նրանց մասնագիտությունը և ժամկետը, յերբ պետք ե նրանք ստացվեն, այլև այն մասնագետների թիվը, վորոնք անհրաժեշտ ընդհանուր թվից պետք ե ստացվեն՝ ուսման ժամանակ կատարված, ամրացման կարգով։

Հայտերը ներկայացվում են՝

ա) Տնտեսական միավորումների մեջ մտնող ձեռնարկությունների նկատմամբ — այդ միավորումների հաշվ. բաշխ. բաժիններին։

բ) Մյուս ձեռնարկությունների և հիմնարկների նկատմամբ, վորոնք անմիջապես լենթարկվում են ժողկոմատներին — այդ ժողկոմատների հաշվ. բաշխ. բաժիններին։

Տնտեսական միավորումների հաշվ. բաշխիչ բաժիններից ստացած հայտերը խմբավորվում են և ամեն տարի դեկտեմբերի մեկին և հունիսի 1-ին ներկայացվում են ԽՍՀՄ և Միութենական հանրապետությունների համապատասխան ժողկոմատների հաշվ. բաշխ. բաժիններին։

3. Մասնագետներ մատակարարելու և բաշխելու ծրագիր կազմելը

35. Ժողկոմատների հաշվ. բաշխիչ բաժին-

ներն ամեն տարի դեկտեմբերի 15-ին և հունիսի 15-ին կազմում են տվյալ ժողկոմատի իրավասության յենթակա ձեռնարկությունների և հիմնարկների առաջիկա կիսամյակի համար մասնագետների մատակարարման ծրագիրը և տվյալ ժողկոմատին ու նրա իրավասության յենթակա տնտեսական միավորումներին ամրացված ուսումնական հիմնարկներից արձակվող մասնագետների բաշխման պլանը:

36. Մասնագետների մատակարարման ծրագիրը կազմելիս հաշվի յեն առնվելու՝

ա) Տվյալ ժողկոմատի վրա ամրացված՝ ուսհիմարկներն ավարտած մասնագետները,

բ) Ուրիշ ժողկոմատների վրա ամրացված, բայց միևնույն ժամանակ համապատասխան պայմանագրերով և տվյալ ժամկետի համար մասնագետներ պատրաստող ուսհիմնարկներն ավարտած մասնագետները.

գ) Միութենական հանրապետությունների տրամադրության տակ մնացած ուսհիմնարկներն ավարտած մասնագետները:

Առանձին պայմանագրերի հիման վրա՝ ուրիշ ժողկոմատների համար սլատրաստող ուսհիմնարկներն ավարտած մասնագետների վերաբերյալ պահանջներն ուղակվում են համապատասխան ժողկոմատներ, իսկ միութենական

հանրապետությունների տրամադրության տակ մնացած ուսիմնարկներն ավարտած մասնագետների վերաբերյալ պահանջներն ուղարկվում են Միութենական հանրապետությունների աշխատանքի ժողկոմատների ցուցմունքներով։

37. Տվյալ ժողկոմատի վրա ամրացված ուսիմնարկներն ավարտած մասնագետներին բաշխելիս, այդ ժողկոմատը հաշվի յեւ առնում՝

ա) Առաջին հերթին տվյալ ժողկոմատին յենթակա ձեռնարկությունների և հիմնարկների պահանջները, հաշվի առնելով՝ նաև ժողկոմատի վրա ամրացված ուսիմնարկների կարիքն ապիրանտների նկատմամբ։

բ) Յերկրորդ հերթին—ուղիղ ժողկոմատների պահանջները։

38. Ժողկոմատի կազմած ծրագիրը մասնագետներ բաշխելու վերաբերյալ անհապաղ հաղորդվում է բոլոր շահագրդուված ժողկոմատներին, այլև ըստ պատկանելույն՝ ԽՍՀՄ Աշխատակիցներին, կամ Միութենական հանրապետությունների Աշխատակիցներին։

39. ԽՍՀՄ և Միութենական հանրապետությունների աշխատակիցների պահանջմամբ ժողկոմատները պարտավոր են ներկայացնել բոլոր այն նյութերը, վորոնք ոգտագործվել են ծրագիր կազմելիս (տեղեկություններ ուսիմ-

նաբեկները ավարտածների մասին, յերիտասարդ
մասնագետների վերաբերյալ յեղած պահանջ-
ները):

4. Մասնագետների անհատական
բաշխում

40. Ծրագրի համեմատ մասնագետների բաշ-
խումը կատարում են այն տնտեսական մարմին-
ների միավորումների և ժողկոմատների հաշվ-
բաշխիչ բաժինները, վորոնց անմիջական իրա-
վառության տակ են զտնվում ուսհիմնարկները:
Բաշխումը կատարվում է ուսհիմնարկների, արհ-
միությունների այլեւ, տվյալ ուսհիմնարկների հետ
մասնագետներ պատրաստելու մասին պայմա-
նագիր կնքած տնտեսական միավորումների և
ժողկոմատների ներկայացուցիչների մասնակ-
ցությամբ:

Տնտեսական միավորումների հաշվ. բաշխիչ
բաժիններն իրենց աշխատանքները տանում են
համապատասխան ժողկոմատի ղեկավարությամբ:

41. Մասնագետների բաշխումը կատարվում
է մանրակրկիտ ընտրությամբ և հաշվի առնե-
լով այս կամ այն ձեռնարկության կամ հիմ-
նարկության անձնակազմը յերիտասարդ մաս-
նագետների կաղըբերով լրացնելու կարևորու-
թյունը:

42. Մասնագետների բաշխումը կատարելիս՝
պահպանվում են հետեւյալ կանոնները.

ա) Առանձին ուշադրություն ե դարձվում
կուլտուրական կենտրոններից հեռու զանվաղ
հիմնարկություններն ու ձեռնարկությունները
մասնագետներ ուղարկելու վրա:

բ) Այս կամ այն ազգության պատկանող
մասնագետները, իրքեւ որենք, ուղարկվում են
համապատասխան ազգային հանրապետությունն-
եր ու մարզեր:

գ) ԲԳ կարմիր Բանակի կադրային հրամ-
կազմին պատկանող զինծառալողների (բացի
ժամկետային ծառայության կրտսեր հրամկազ-
մից) կանայք առավելապես ուղարկվում են այն
վայրերը, ուր ծառալում են նրանց ամուսինները:

դ) Այն անձինք, վորոնք ուսման ժամա-
նակ ամրացված են յեղել վորոշ ձեռնարկու-
թյունների կամ հիմնարկների վրա, ուղարկվում
են այդ ձեռնարկություններն ու հիմնարկները
(սրանց շարքին են պատկանում կոնտրակտա-
ցիոն պարմանագրերի հիման վրա կամ շահա-
դրգոված այն ձեռնարկությունների ու հիմ-
նարկների և անտեսական միավորումների կամ
ժողկոմատների միջե, վորոնց իրավասության
տակ են գտնվում ուսիմնարկությունները,
կնքված պայմանագրերով ամրացվածները):

5. Մասնագետներին աշխատանքի
ուղարկելը

43. Տնտեսական միավորումների և ժողկոմատ-
ների հաջվ բաշխիչ բաժինների կողմից կատա-
րած՝ մասնագետների անհատական բաշխման
համաձայն, ուսիմնարկները մասնագետներին
հրաման (պուտյովկա) են տալիս աշխատանքի
ուղարկելու համար:

Պուտյովկաները տրվում են ուսումնավար-
տելու որից (այսինքն ուսումնական ծրագրի
բոլոր պահանջները կատարելուց հետո) վոչ ու չ
քան հինգ որվա ընթացքում:

Պուտյովկայի պատճենը և ավարտականի
իսկական փաստաթուղթը ուսիմնարկի կողմից
ուղարկվում են այն ձեռնարկություն կամ հիմ-
նարկություն, վորտեղ ուղարկվում ե մասնա-
գետը:

44. Պուտյովկան տալու որից՝ մասնագետին
մի ամսվա արձակուրդ ե տրվում: Այդ ժամկե-
տը լրանալու հետեւյալ որը մասնագետը պար-
տավոր ե ներկայանալ այն ձեռնարկությունը
կամ հիմնարկությունը, ուր նշանակված ե յե-
ղել: Ներկայանալու որը նշանակվում ե պու-
տյովկայում:

Արձակուրդի ժամանակ թոշակառուներին
նպաստ ե տրվում մեկ ամսվա թոշակի չափով,

վորագիսին նա ստանում եր մինչեւ ուսումն ա-
վարտելը։ Արձակուրդի ժամանակ աշխատավարձ
չի վճարվում (վոչ թոշակառուներին և վոչ ել
մյուսներին։)

Մանկավարժական ԲՈՒՀ-երն ու տեխնիկում-
ները ավարտած թոշակառուներին աշխատանքի
ուղարկելին ուշացնելու դեպքում, թոշակը վճար-
վում ե թե արձակուրդի ժամանակի համար և
թե մինչեւ զործի ուղարկելը՝ անցած ժամանակի
համար, բայց ընդհանուր տումանք ուսումն ա-
վարտելուց հետո վոչ ավելի, քան յերկու ամսի
համար։

ԲՈՒՀ-երն ու տեխնիկումներն ավարտածնե-
րին (բոլոր ճյուղերի և մասնագիտության) ար-
ձակուրդ չի տրվում, յեթե նրանք մինչեւ պու-
տյովկա ստանալը վերջին 12 ամիսների ընթաց-
քում ուսհիմնարկում արձակուրդ (կանիկուլ) են
ունեցել։

45. Պույովկան տալիս ուսհիմնարկը վճարում
և մասնագետներին՝

ա) Տեղափոխության հետ կապված ծախ-
քերի փոխհատուցման հաշվին՝ առ հաշիվ վոչ
պակաս—75 ռ., մինչեւ 1.000 կլմ. ճանապարհ
գնալու դեպքում և վոչ պակաս 100՝ ռ.—բոլոր
մյուս դեպքերում։

բ) Աշխատավարձն ըստ այն պաշտոնի,

վորը մասնադետը ստանձնելու յե ձեռնարկություններում կամ հիմնարկներում՝ այն ժամանակամիջոցի համար, վորի ընթացքում մասնագետը ճանապարհին և լինելու մինչև աշխատանքի աեղը հասնելու:

դ) Այն թոշակառուներին, վորոնք արձակուրդի իրավունք ունեն, բացի այդ, վճարվում են նաև նպաստ արձակուրդի ժամանակամիջոցի համար, մի ամսվա թոշակի շափով (հոդ. 44-րդ):

Բոլոր նշված դումարները վճարվում են ուսհիմնարկի կողմից այն ձեռնարկության կամ հիմնարկության հաշվին, վորտեղ նշանակված եւ մասնագետը:

46. Պուտյովկան ստանալու որից մասնագետի վրա լիովին տարածվում են՝ աշխատանքի և ապահովագրության վերաբերյալ գոյություն ունեցող որենսողությունը:

6. Մասնագետի ընդունումը և ոգտագործումը

47. Ձեռնարկություններն ու հիմնարկություններն այս հրահանգի կարգով բաշխված մասնագետներին ընդունում են աշխատանքի միմիայն այն ուսհիմնարկներից տված պուտյովկաներով, վորտեղ նրանք ավարտել են ուսումը:

48. Յերբ մասնագետը հասնում է իր աշ-
խատանքի վայրը, այն ձեռնարկությունն ու
հիմնարկը, վորտեղ նա ուղված է յեղել, ձեռ-
նարկությունը կամ հիմնարկը վճարում է նրան,
հաշվելով առաջուց տրված գումարները, տեղա-
փոխության ծախքերի հետ կապված հետեյալ
փոխհատուցումները.

ա) Ճանապարհածախքը (բայցառությամբ
այն դեպքերի, յերբ վարձողը ինքն է փոխա-
դրության միջոց արամազրում) 1) յերկաթ-
դամի կոշտ տեղի տոմսի արժեքը և պլացկարտ,
իսկ մեկ որից ավելի տեսη ճանապարհի դեպ-
քում՝ կողմերի համաձայնությամբ, նաև արա-
գության համար: 2) ջրային ճանապարհներով-
յերկրորդ կարգի աարիֆով: 3) խճուղային և
սալի ճանապարհներով՝ տվյալ վայրում գոկու-
թյուն ունեցող գներով, տեղական իշխանու-
թյան վավերացումով:

բ) Նույն պաշտոնատեղում ընակվելու հա-
մար անհրաժեշտ տնային իրերը փոխադրելու
ծախքը՝ վարձողի հետ համաձայնեցրած սահ-
մաններում, սակայն ընդհանուր առմամբ վոչ
ավելի՝ 240 կիլոգրամից:

գ) Ճանապարհին յեղած ժամանակամիջոցի
համար որապահիկ՝ ամսական աշխատավարձի
^{1/39} չափով, բայց որական վոչ պակաս 2 ռ.

50 կոպ. և վոչ ավելի 10 ո., բայտ վորում մեկ-
նելու և ժամանելու որերը համարվում են մեկ որ:

դ) Տեղափոխության համար նպաստ՝ ամ-
սական աշխատավարձի կեսի չափով.

յե) Աշխատավարձը՝ ճանապարհին յեղած
ժամանակի համար:

Մասնագետի ընտանիքի անդամների տեղա-
փոխության դեպքում՝ մասնագետին վճարվում
ե նրանց ճանապարհածախքը և նրանց իրերը
փոխադրելու ծախքն ու տեղափոխության նր-
պաստը, յուրաքանչյուր անձի համար՝ մասնա-
գետի ամսական աշխատավարձի ^{1/8}ի չափով:

Որպահիկը, տեղափոխության փոխհատու-
ցումը և աշխատավարձը ճանապարհին յեղած
ժամանակի համար հաշվվում ե այն պաշտոնի
աշխատավարձից, վորում ընդունվել ե մասնա-
գետը, Յեթե պարզվի, վոր նրա աշխատավարձը
պակաս ե այն աշխատավարձից, վորի հաշվով
նրան ավանս ե տրված, այդ դեպքում մասնա-
գետը վերադարձնում ե ավելի ստացած գու-
մարը, շիջելով այն—6 ամսում: Յեթե նրա աշ-
խատավարձը բարձր լինի, այդ դեպքում վճար-
վում ե նրան տարբերությունը:

Մինչև 25 կլմ. տարածության վրա փոխա-
դրը վելիս՝ վոչ մի փոխհատուցում չի տրվում,

բացի փոխտղրվելու և իրեր տեղափոխելու վաստացի ծախսից:

Հետադա տեղափոխությունների ժամանակ՝ նորագարա մասնագետներին փոխհատուցումները տրվում են ընդհանուր հիմունքներով:

49. Պուտյովկաներով ընդունված մասնագետներն՝ աշխատանքի յեն նշանակվում ըստ ուսիմնարկում ձեռք բերած մասնագիտության:

Արտադրական ստաժը դյուրությամբ անցկացնելու համար յերիտասարդ մասնագետները սկզբներում նշանակվում են ըստ իրենց մասնագիտության ցածր վորակի աշխատանքի (որինակ՝ ճարտարագետը վարպետի պաշտոնով, իսկ տեխնիկը՝ տասնապետի), սակայն պայմանով, վոր ձեռք բերվող արտադրական փորձառության համեմատ կապահովվի նրա հետագա առաջքաշումը:

50. Յերիտասարդ մասնագետներին աշխատանքում նպատակահարմար ձեռվ ոգտագործելու պատասխանատվությունը դրվում է համապատասխան ձեռնարկության կամ հիմնարկության (գործարան, ֆաբրիկա և այլն) ղեկավարի վրա:

51. Այս հրահանդի կարգով գործի ընդունված մասնագետների աշխատանքի պայմանները կարդավորվում են ընդհանուր աշխատենադրության մասնակիությունունից մասին — 3

թյամբ։ Նրանց աշխատավարձը պահպանվում է համաձայն ստանձնած պաշտոնի։

52. Այս հրահանգի կարդով աշխատանքի տեղափորփած մասնագետները ուսիմնարկին ավարտելուց հետո՝ մինչև յերեք տարին լրանալը՝ չեն կարող արձակվել հաստիքների կրճատման հետևանքով՝ տունց նախապես տեղական աշխատանքի մարմնին հայտնելու։

53. Վորոշ վալրեր (Կյուղական վայրեր, հեռավոր վայրեր և այլն) կամ վորոշ ձեռնարկություններ ու հիմնարկներ ուղղարկվող մասնագետների արտօնությունների մասին գործող հատուկ որենքները տարածվում են նաև այս հրահանգի կարդով աշխատանքի ուղղարկվող մասնագետների վրա։ Այդ հատուկ որենքները տարածվում են նրանց վրա նաև 43 հոգիածի համեմատությամբ բարձր փոխհատուցումներ ստիմանելու նկատմամբ։

7. ԽՍՀՄ Աշխաժողկոմատի և Միութենական հանրապետությունների աշխաժողկոմատների ֆունկցիաները

54. Յերիտասարդ մասնագետների բաշխում կատարելու բնագավառում ԽՍՀՄ Աշխաժողկոմատը և Միութենական Հանրապետությունների աշխաժողկոմատներն, ըստ պատկանելույն, իրա-

գործում ևն՝ կարդավորման, ուղարկման և տընտմարժինների միավորների և ժողկոմատների աշխատանքներին հսկնլու ֆունկցիաներ՝ (մատնագետների կարիքի ընդհանուր հաշվառում, բնիչ-երն և տեխնիկումներն ավարտողների ընդհանուր հաշվառում, բաշխման ընդհանուր ծրադրի կազմում և այլն):

55. ԿԱՇՄ Աշխատողկոմատը և Միութենուկան Հանրապետությունների Աշխատողկոմատներն, ըստ պատկանելույն, իրավունք ունեն՝

ա) Շահադրդոված ժողկոմատների ըողոքների հետեանքով կամ իր ձեռներեցությամբ ընդիանուր ծրադրերի հետ համաձայնեցնելու նպատակով, փոփոխություններ մտցնելու ժողկոմատների կողմից կազմված յերիտասարդ մատնագետների բաշխման ծրադրերի մեջ:

բ) Վորոշ ձեռնարկությունների և հիմնարկների վրա անրացված ուսանողների վերաբաշխումն կատարելու և ուրիշ ձեռնարկությունների վրա անրացնելու:

գ) Մի ձեռնարկության կամ հիմնարկության ուղարկված մատնագետների վերաբաշխում կատարելու և ուղարկելու ուղիղ ձեռնարկություն կամ հիմնարկություն:

56. ԿԱՇՄ Աշխատողկոմատի կամ Համամիութենական Հանրապետությունների Աշխատողկո-

մատների կողմից մասնագետների վերաբաշ-
խումն կատարելու դեպքում՝ այն ձեռնարկու-
թյուններն ու հիմնակները, վորոնց տրամա-
դրության տակ են դրվում մասնագետները,
պարտավոր են հատուցել մյուս ձեռնարկու-
թյուններին և հիմնարկներին՝ նրանց կողմից
մասնագետների վրա կտարած ծախքերը:

8. Հաշվետվություն

57. ԽՍՀՄ բոլոր ժողկոմատները՝ — ԽՍՀՄ
Աշխատողկոմատին, իսկ Միութենական հանրապե-
տությունների ժողկոմատները՝ — Միութենական
համապատասխան Հանրապետության Աշխատողկո-
մատին՝ պետք ե հաշվետվություն ներկայաց-
նեն՝ — մասնագետներին փաստորեն տեղավորե-
լու և աշխատանքում ոգտագործելու մասին:

ԽՍՀՄ ժողկոմատները հաշվետվություն են
ներկայացնում տարին մեկ անգամ, վոչ ուշ
դեկտեմբերի 25-ից։ Միութենական Հանրապե-
տությունների ժողկոմատները հաշվետվություն
են ներկայացնում ։ Միութենական հանրապե-
տությունների Աշխատողկոմատների սահմանած
ժամկետներում։

Միութենական Հանրապետությունների աշխա-
տողկոմատներն իրենց ստացած հաշվետվու-
թյունների խմբավորումը՝ ներկայացնում են

ԽՍՀՄ Աշխաժողկոմատին հունվարի 10-ից վոչ ուշ:

58. Յերիտասարդ մասնագետներին տեղափորելու մասին ժողկոմատների հաշվետվություններում պետք է լուսաբանված լինի ամբողջ այդ հարցը (ամբողջ ժողկոմատի կամ նրա առանձին ձեռնարկությունների և հիմնարկությունների նկատմամբ), այլև լինեն հետևյալ տեղեկությունները՝

ա) Տվյալ ժողկոմատին ստորագրյալ ձեռնարկություններն ու հիմնարկությունները ուղարկված յերիտասարդ մասնագետների ընդհանուր թիվը.

բ) Փաստորեն այդ ձեռնարկություններն ու հիմնարկները յեկած յերիտասարդ մասնագետների թիվը և աշխատանքում տեղավորվածների թիվը՝

դ) Յերիտասարդ մասնագետներին աշխատանքում տեղավորելու հողի վրա ինչպիսի թյուրիմացություններ են ծագել և ինչպես են նրանք լուծվել:

«Ա» և «Բ» կետերով տեղեկությունները տրվելու լեն մասնագետներին, ըստ առանձին մասնագիտությունների բաշխելու մասին:

59. Միութենական Հանրապետությունների Աշխաժողկոմատներն իրենց աշխատանքի մասին ԽՍՀՄ Աշխաժողկոմատին ներկայացվելիք հաշվետվության մեջ պետք է մանրամասն լուսաբանեն՝ տվյալ հանրապետության սահմաններում

յերիտասարդ՝ մասնագետների բաշխման նկատ-
մամբ տարված ամբողջ աշխատանքը:

IV ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅՑՈՒՆԵՐ

60. Այս հրահանդը կիրարկության և դրվում
հետեւյալ ժամկետներում՝

ա) Թոշակիներին վերաբերող կանոնները—
1930 թ. հոկտեմբերի 1-ից.

բ) Պրակտիկանուների աշխատանքի պայ-
մաններին վերաբերող կանոնները—1930 թ.
նոյեմբերի 1-ից.

գ) Աշխատանքի տեղափորերուն վերաբերող
կանոնները—այս հրահանդը հրատարակելու
որից:

61. Յեթե ներկայումս՝ տնտեսական միա-
վորումի կամ ժողկոմատի վրա ամրացված՝
ԲՌՀՀ-ը կամ աեխնիկումը ավարտելուց հետո՝
մասնագետը, համաձայն ԽՍՀՄ Աշխժողկոմատի
1930 թ. հունվարի 6-ի № 3 վորոշման՝ («ԽՍՀՄ
Աշխ. Ժկ Տեղեկատու» 1930 թ. № 1—2) ու-
ղարկված ե յեղել մեկ տարվա ստաժիրովիայի,
այդ դեպքում՝ նա նույն ձեռնարկությունում
կամ հիմնարկում ամրացվում ե մշտական աշ-
խատանքում—1930 թ. սեպտեմբերի 19-ից
(այսինքն՝ 1930 թ. սեպտեմբերի 16-ի որենքը
հրապարակելու որից):

Տնտեմարմինների միավորումներին և ժող-

կոմառներին իրավունք եւ վերտպահվում, անհրաժեշտության դեպքում, մշտական աշխատանքի իրավունք ստացած ստաժյորին մի ձեռնարկությունից կամ հիմնարկից մյուսը տեղափոխելի:

Մշտական աշխատանքում ամրացված բոլոր ստաժյարների նկատմամբ՝ յերեք տարվա ժամկետը, վորի ընթացքում նրանք չեն կարող հաստիքների կրնատման պատճառով արձակվել առանց աշխատանքի մարմնին նախապես հայտնելու՝ (հոգ. 52-րդ) — հաշվվում է 1930 թ. սեպտեմբերի 19-ից:

62. Այս հրահանդի 29—32 և 49—53-րդ հոդվածները տարածվում են նաև այն մասնադիմուների վրա, վորոնք մինչև այս հրահանդի հրապարակումը ներկայումս տնտեմարմինների, միավորումի կամ ժողկոմատի վրա ամրացված ԲՌՀՀ-երն ու տեխնիկումներն ավարտելուց հետո՝ տեղափորիած են աշխատանքում:

63. Այս հրահանդի խախտումը հետապընդուռ է Միութենական Հանրապետությունների որենսդրությամբ:

ԽՍՀՄ Աշխատանի Ժողկումտի կամիսար՝ ՑԻԽՈՆ
ԽՍՀՄ Աշխատանի Կոլլեգիայի անդամ
յեվ բանումի պատրաստ. յեվ բաւհման
վարչ. պետի տեղակալ՝ ՎԱՍԻԼԵՎԱ

(Հրատար. «ԽՍՀՄ Աշխատանի. Տեղեկատու» 1930 թ. № 28)

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ № 26

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

Մինչև 18 տարեկան հասակ հասնելը ֆարզործուսի գպրոցները ավարտած դեռահասների աշխատանքի պայմանների մասին

1932 թ. փետրվարի 14-ին.

Ֆարզործուսի գպրոցներից 1932 թվին՝ վոչ միայն 18 տարեկան հասակը լրացած, այլև 18 տարին չլրացած աշակերտների արձակման կտպակցությամբ, ԽՍՀՄ Աշխատողկոմատը պարզաբանում ե.

Ծնումարմինները պարտավոր են ընդունել արտադրության մեջ ֆարզործուսի գպրոցները ավարտած՝ 18 տարին չլրացրած դեռահասներին, և ապահովել նրանց աշխատանքի կիրառում՝ համապատասխան նրանց կողմից ստացած վորակի:

Այդ դեռահասների աշխատանքի որը վեց ժամից ավելի չպետք ելինի և, ընդհանրապես, նրանց նկատմամբ պետք ելիրառվի դեռահասների աշխատանքի մասին գործող որենսդրությունը:

ԽՍՀՄ Աշխատանքի ժողովրդական կոմիսարի տեղակալ՝ Կրավալ.

ԽՍՀՄ Աշխատողկոմատի կողեզիայի անդամ՝ աշխատանքի կազմակերպման վարչության պետ՝
Դուրներ

1932 թ. փետրվարի 14-ին.

ՎՈՐՈՇՈՒՄ № 292

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ԿՈՄԲՈՒՀՀ-ԵՐԸ մանողներին արձակուրդներ տբամա-
ղրելու մասին

1930 թ. սեպտեմբերի 17-ին

ԽՍՀՄ Աշխատողկոմատը վորոշում ե՝

1. Բոլոր ձեռնարկությունները, հիմնարկ-
ներն ու կազմակերպությունները պարտավոր
են տրամադրել Կոմունիստական բարձրագույն
ուսումնական հիմնարկները (Կոմբուհհ-երը) մըտ-
նող աշխատողներին արձակուրդներ՝ պահպա-
նելով նրանց միջին աշխատավարձը, ի հաշիվ
հերթական արձակուրդի — հետևյալ հիմունքնե-
րով.

ա) Մոսկվայի, Իվանովսկիի, Զապադնըլի
(Արևմտյան), Բելոռուսիայի, Ցենտրալնո-Զեր-
նողեմնուի շրջանի, Միջին-Վոլգայի (Ցերկրալին),
Ստորին-Վոլգայի (Ցերկրալին), Նիժնիգորոդսկի՝
Արտեմի անվան Կոմբուհ (Ցերկրային), Սա-
րատովի, Թաթարիայի, Դնեպրոպետրովի, Սե-
վերնըյ (Հյուսիսային) (Արխանգելյան), Հյուսիս-
Կովկասյան, Անդրկովկասյան, Կազակստանի,
Միջին-Ասիայի, Ռւրալի, Սիբիրիայի, Արևելյան
Սիբիրիայի (Կազմակերպման շրջանում), Հեռա-

վոր-Արեւելքի՝ Կոմունիստական համալսարանները գործուղվաղներին — մեկ ամիս:

բ) Լենինգրադի քաղլուսվարական՝ Ն. Կ. Կրուպսայայի անվ. Ինստիտուտ, Լենինգրադի Կոմունիստական համալսարան, Ն. Կ. Կրուպսկայայի անվ. Կոմունիստական Կրթության Ակադեմիա, Յա. Մ. Սվերդլովի անվ. Կոմունիստական համալսարան, Ի. Վ. Ստալինի անվ. Արեւելքի Աշխատավորների Կոմունիստական համալսարան, Յու. Յու. Մարխլեվսկու անվ. Արևմտատքի Ազգային Փոքրամասնությունների Կոմունիստական Համալսարան և Ժուռալիստիկայի Պետական Ինստիտուտ գործուղվածներին — մեկ և կես ամիս:


դ) Կարմիր պրոֆեսուրայի Ինստիտուտ, ԽՍՀՄ ԿԳԿ-ին տոքնթեր՝ Կոմունիստական Ակադեմիա և նրա բաժանմունքները ընդունվելու համար փորձարկման ստուգումներին թույլատրվածներին — յերկու ամիս (ինստիտուտից և կոմակադեմիայից՝ փորձարկումներին մասնակցելու թույլատրելու մասին տեղեկանք ներկայացնելու պայմանով):

2. 1. հոդ. մատնանշված արձակուրդները պետք են ողողադործվեն բացառապես բնականով (նատուրալով) այն ել մինչև համալսարանին ուսումնական հիմնարկ մտնելու շրջանում: Այդ

արձակուրդները բնականով չողագործելու զեպ-
քում, վորեև փոխառուցում ստանալու, մաս-
նավորապես դրամական, իրավունք չի տրվում:

Յ. Այս վորոշումը հրատարակելու կատակ-
ցությամբ՝ վերացվում ե ԽՍՀՄ Աշխատողկոմատի
1929 թ. հուլիսի 3-ի, Կոմինիչերը մտնող աշ-
խատողներին արձակուրդներ արամադրելու մա-
սին № 214 վորոշումը («ԽՍՀՄ Աշխատկ. Տեղեկ.»
1929 թ. № 28 — 29):

ԽՍՀՄ Աշխատանքի ժողովը դադարական կոմիսարի
տեղ.՝ Կրավալ



ԲՈՎԱՆԴԻԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

- | | | |
|----|--|----|
| 1. | Առաջաբան | 3 |
| 2. | Բանֆակները, տեխնիկումները և ԲՈՒՀ-երը
գործողվող բանվորների և ծառայողների
արտոնություններն մասին | 7 |
| 3. | Ցերեկուան բանֆակների, ինդուստրիալ բան-
վորական տեխնիկումների և ինդուստրիալ-
տեխնիկական ինստիտուտների ուսանողնե-
րի, նույնպես՝ ԲՈՒՀ-երի, տեխնիկումների
և բանֆակների համար նախապատրաստող
դասընթացների ուսանողների արտոնու-
թյունների մասին | 9 |
| 4. | Բարձրագույն դպրոցների, տեխնիկումների և
ուսանողների թոշակների, նրանց արտա-
դրական պրակտիկալի ժամանակ աշխատան-
քի պայմանների մասին և ուսումնական ավար-
տելուց հետո նրանց աշխատանքի տեղավո-
րելու կարգի մասին. | 13 |
| 5. | Մինչև 18 տարեկան հասակ հասնելի ֆաբ-
գործուսի դպրոցն ավարտած դեռահասների
աշխատանքի պայմանների մասին | 26 |

6. Կոմ-ԲՈՒՀՀ-ԵՐԸ ԸՆԴՈւՆՎՈՂ անձանց արձաւ-
կուրդներ տրամադրելու կարգի մասին . . . 27
7. Հավելված № 1. ԽՍՀՄ Ժողկոմիսորհի 1929 թ.
մայիսի 8-ի, բանվորական ֆակուլտետնե-
րը և բարձրագույն ուսումնական հիմնարկ-
ները գործուղվող բանվորների և ծառայող-
ների արտօնությունների մասին . . . 28
8. Հավելված № 2. ԽՍՀՄ Ժողկոմիսորհի 1930 թ.
հոկտեմբ. 2-ի, ԽՍՀՄ Ժողկոմիսորհի 1929 թ.
մայիսի 8-ի, բանֆակները և բարձր ուսում-
նակ. հիմնարկները գործուղվող բանվորնե-
րի և ծառայողների արտօնությունների մա-
սին վորոշումը՝ ցերեկվա տեխնիկումներ
գործուղվածների վրա տարածելու մասին
վորոշումը 30
9. Հավելված № 3. ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1930 թ.
ապրիլի 14-ի, ցերեկոյան բանֆակների,
ինդուստրիալ բանվորական տեխնիկումնե-
րի և ինդուստրիալ-տեխնիկական ինստի-
տուտների և ԲՈՒՀՀ-երի, տեխնիկումների ու
բանֆակների համար նախապատրաստող
դասընթացների ու բարձրագույն տեխնի-
կական կրթության խմբակների միացում-
ների ուսանողների արտօնությունների մա-
սին, № 155 վորոշում 31
10. Հավելված № 4. ԽՍՀՄ Աշխժողկոմատի
1930 թ. հուլիսի 27-ի, ցերեկոյան ինդուս-
տրիալ տեխնիկումների, ինդուստրիալ-տեխ-
նիկական ինստիտուտների, բանֆակ-
ների և ԲՈՒՀՀ-երի, տեխնիկումների ու

բանֆուկների համար նախապատրաստող
դասընթացների մասին, № 251 վորոշում . 34

11. Հավելված № 5 Բաղվածք ԽՍՀՄ Աշխատողկո-
մատի 1931 թ. մայիսի 21-ի, ձեռնարկու-
թյուններում և հիմնարկներում արտադրա-
կան սեփմբը ամրացնելու միջոցառումների
մասին № 117 վորոշումը 37

12. Հավելված № 6. Բաղվածք ԽՍՀՄ Կենտգործ-
կոմի և Ժողկոմխորհի 1932 թ. հունիսի 7-ի
բարձրագույն ուսումնական հիմնարկների և
տեխնիկումների ուսանողության թոշակնե-
րի մասին վորոշումը 39

13. Հավելված № 7. ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1932 թ.
փետրվարի 10-ի, № 181, բարձրագույն ու-
սումնական հաստատությունների, բարձ-
րագույն տեխնիկական ուսումնական հաս-
տատությունների, տեխնիկումների և բան-
ֆակների ուսանողների թոշակացնն ապա-
հոգման կարգի վորոշումը 42

14. Հավելված № 8. ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1933 թ.
մայիսի 3-ի, ԲՇԻՀ-երի, ԲՏՇԻՀ-երի և տեխ-
նիկումների ուսանողների արտադրական
պրակտիկակի մասին վորոշումը 48

15. Հավելված № 9. ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1930 թ.
հոկտեմբ. 4-ի № 304, բարձրագույն գրպ-
րոցների և տեխնիկումների ուսանողների
թոշակների, նրանց արտադրական պրակ-
տիկակի ժամանակ աշխատանքի պայման-
ների մասին և ուսումնավարության հետ

16. Հավելված № 10. ԽՍՀՄ Աշխաղողկոմատի 1932 թ.
փետրվարի 14-ի, մինչև 18 տարեկան հասակ հասնելը ֆաբրուրծուսի դպրոցները աշվարտած գեռահասների աշխատանքի պարմանների մասին № 26 վորոշումը 72

— 17. Հավելված № 11. ԽՍՀՄ Աշխաղողկոմատի 1930 թ.
սեպտեմբերի 17-ի, Կոմ-ԲՈՒՀ-երը ընդունվողներին արձակուրդներ տրամադրելու մասին, № 292 վորոշումը 73

Քավանդակուրուն 77



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044736

(254) А 8086
Գիտե Ե 1 ուսութիւն

Ա. Բալայն

Օ трудовых привилегиях студентов и молодых
специалистов

Դ Ի Մ Ե Լ

ՅԵՐԵՎԱՆՈՒՄ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՎԵՏ. ԲԱԺՆԻ ՀՐԱՏ. ՄԱՍԻՆ

ԵՐԱՆԱԿՆԵՐՈՒՄ՝

ԵՐԱՎՐԱՅԻՄՐԵՐԴԵՐԻՆ